



14-412-376  
14-412-376  
14-412-376

U.2.

136

736

2012

Արաբական գիւղերից

# ԱԼՍՈՒԹԻՒՆ

b h

ՀՐԱՇԱԼԻ ՀՐԱԳ



Թարգ. Անգլերենից

ԵԶՆԻԿ Վ. ԵՐԿԱՐԱԿԵՑԵԱՆ

ԱԽԾ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԿ

1960

ԱՐ - ԶԱՐԴԱՐ

ՆՈՐ-ԶՈՒԴԱ

Տպարան Ա. Ամենափրկիչ Վանիի

1906թ.

# 2003

## պահանջման աշխատավորություն

# СФЕРУЛ

八

ФИЛИППОВА



պիտիլիպուլ . բարեկ

સર્વાંગીનિયાત

1990-1991 学年 第一学期

1940-1  
Sept. 20th

(89945-44)

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԽԱՆՐԱԴՐԱՄ

(121-97) (76° - 2000)

Մստաֆան յանդիմանում էր նրան բայց  
նա էլի մնում էր անուղղայ. հայրն այնքան  
շատ էր նեղացած նրանից, որ հիւանդա-  
ցաւ և մեռաւ: Այսդիմին այժմ բոլորո-

վին անձնատուր եղաւ ծուլութեան, մինչև  
տասն և հինգ տարեկան հասակն երբէք մը-  
տադիր չ'եղաւ մի օգտակար զործի: Երբ  
մի օր խաղում էր նա փողոցում իր շար  
ընկերների հետ՝ մի օտարական անցաւ մօ-  
տով: Այս օտարականը կախարդ էր՝ ճանաշ-  
ւած իրեն Սֆրիկեցի մոզ: Նա Սլաղինի  
պէմքին մի ինչ-որ բան նկատեց, որբ հա-  
ւաստիացրեց նրան, որ նա իր նորմտակին  
ծառայող մի յարմար տղայ է. Նա հարցրեց  
նրա անունը. և երբ իմացու ամեն ինչ որ  
ուզում էր կիտենալ՝ դժաց դէպի նա և նր-  
րան մի կողմ տանելով ասաց. «այ տղա, քո  
հայրը դերձակ Մստաֆա չի կոչում»: «Այն  
պարոն,» պատասխանեց տղան, «քայլ նա եր-  
կար ժամանակ է, որ մեռել է:» Այս խօսքի  
վրայ Սֆրիկեցի մոզ նետեց իր բազուկներն  
Սլաղինի վզով և համբուրեց նրան քանիցս  
անդամ տրաստուաթոր աշքերով և ասաց,  
«ես քո հօր եղբայրն եմ. քո արժանաւոր  
հայրն իմ հարադատ եղբայրն էր. ես ճանա-  
շեցի քեզ հինց առաջին տեսնելովս, որովհե-  
տեւ դու այնքան շատ նման ես նրան.» յետոյ նա  
տուեց Սլաղինին մի լիք բուռ դրամ ասելով,  
«զնո՞ւ մօրդ մօտնուիրիր նրան իմ յարգանք-  
ներս և ասն, որ ես պիտի այցելեմ նրան

առաւօտեան:» Սլաղին վազեց իր մօր մօտ  
ուրախացած իր հօր եղբօր տուած դրամ-  
ների վրայ: «Մայրիկ,» ասաց նա, «ես հօրեղ-  
բայր ունիմ:» «2է, որդի,» պատասխանեց նր-  
բա մայրը: «Ես հինց գալիս եմ՝» ասաց Ս-  
լաղին՝ «մի մարդու մօտից, որն ասում էր  
թէ ինքն իմ հօր եղբայրն է, նա լացաւ և  
համբուրեց ինձ՝ երբ ես ասի նրան թէ իմ  
հայրը մեռել է, և ինձ գրամ տուեց՝ նուիրե-  
լով իր սիրոյ բարեները քեզ և խոատանա-  
լով գտի ու այցելել քեզ:» «Ճիշտ որդին,» պա-  
տասխանեց մայրը. քո հայրը չ'ունէր եղբայր,  
ոչ ևս դու հօր եղբայր:»

Հետևեալ օրը, մոզը գտաւ Սլաղինին  
քաղաքի մի ուրիշ մասում խաղախու և նրան  
զրկելով նրա ձեռքը դրեց երկու լիրա և ա-  
սաց. «տար այս մօրդ, ասն նրան, որ ես  
նրան կտեսնեմ այս գիշերը, և խնդրիր նր-  
րանից, որ մի քիչ բան պատրաստի ընթ-  
րիքի համար, բայց նախ դու ցոյց տնկի ինձ  
այն տունն ուր դուք ապրում էք:»

Սլաղին ցոյց տուեց Սֆրիկեցի մոզին  
տունն և տարաւ երկու ոսկին իր մօր,  
որը զբաղուեց ամբողջ օրը պատրաստելով  
ընթրիքը: Վերջապէս մոզը դուռ բաղխելով  
ներս եկաւ՝ բեռնաւորուած զինիով և ամեն

տեսակի պտուղներով, որոնց բերել էր վայելելու համար։ Իր բերածները Ալադինին տալուց յետոյ, ողջունեց նրա մօրն և ցանկացաւ, որ նա ցոյց տար իրեն այնտեղն ուր իր Մստաֆա եղբայրը նստելու սովորութիւն ունէր։ Ալադինի մայրը կտտարեց նրա ցանկութիւնը. որը վայր ընկառ քանիցս անդամ համբուրեց այնտեղը արտասուալից աշերով և աղաղակելով. «Խեղճ եղբայրա, ի՞նչ ամրաբախտ եմ ես, որ չկարողացայ մի քիչ շուտով գալ քեզ տալու իմ վերջին համբոյրը։ Երբ մոգը նստեց՝ սկսաւ Ալադինի մօր հետ զրոյց տալ, «իմ սիրելի քոյր,» ասաց նա, «զուք մի զարմանաք, որ ինձ տեսած չէր եղբայրու Մստաֆայի հետ պատկուելուց ի վեր։ Քառասուն տարի կրլինի, որ ես այս երկրից բացակայ եմ, և այդ ժամանակամիջոցում ճանապարհորդեցի Սրեելեան Հնդկաց կղզիներում, Պարսկաստանում, Արաբիայում, Սիրիայում և Եգիպտոսում, ամենից յետոյ Աֆրիկա, ուր ես հաստատուեցի։ Ի վերջոյ ինչպէս ընական է մի մարդու, ցանկացայ կրրկին տեսնել իմ հայրենի երկիր, բայց ոչ մի բան այնքան շատ չվշտացրեց ինձ, որքան եղբօրս մահը։ Մոգը նկատելով, որ այրին արտատուեց ամուսնուն յիշելիս, խօսակցութիւնը

փոխեց և որդուն դառնալով հարցրեց նրան, «Բնչ պարապմունքների ես հետևում։» Այս հարցի վրայ պատանին ցած կախեց իր գլուխը և շատ կարմրեց՝ երբ մայրը պատախանեց. «Ալադին ծոյլ տղայ է, նրա հայրը քանի կենդանի էր՝ ջանք էր անում ինչքան կարող էր սովորեցնել նրան իր արհեստը՝ բայց չէր յաջողուում, նրա մահից՝ ի վեր կարող եմ ասել, որ ոչ մի բան չէ անում բացի ծուլութեամբ փողոցներում ժամանակ անցնելուց։ Ինքս որոշել եմ այս օրերումս նրան տնից արտաքսել և թողնել նրան, որ ինքն իր զիմի ճարը գտնի։» Ալադինի մօր սիրտը լցուեց, սկսաւ արտասուել. մոգն ասաց, «Եղբօրորդին, լաւ բան չէ այս, զու պէտք է մտածես ինքդ քեզ օգնել և հայթայթել ձեր աւուր պարէնը. եթէ զու մտադիր չես սովորելու որ և իցէ մի արհեստ, ես կրվարձեմ քեզ համար մի խանութ լի ամենատեսակ կերպաններով և կտաներով, յետոյ նրանցից զոյացած զրամներով զու կարող ես լցնել խանութդ թարմ ապրանքներով և ապրել պատուաւոր կերպով։» Հենց այս ծրագրին հաւանեց Ալադին, որը զգուամ էր զործից։ Նա ասաց մոգին, որ ինքն ա-

ւելի մեծ հակումն ունէր այդ պարապմունք-ներին քանիթէ որևիցէ ուրիշ գործի: «Ան-ուրեմն» ասաց Սփրիկեցի մոգը, ես վաղ հետա-կրտանեմ քեզ և կը հազցնեմ այնքան ճոխ, որ-քան քաղաքի ամենալաւ վաճառականներն են հազնում, և այնուհետև կը բանանք մի խանութ:»

Սյրին այլև չ'կասկածեց իր ամուսնու եղբայր լինելուն վրայ: Նա չնորհակալութիւն յայտնեց նրան իր բարի մտադրութիւնների համար և յորդորելով Ալադինին, որ ինքն էլ աշխատէր իր հօրեղբօր չնորհներին ար-ժանանալու: Ճաշը պատրաստուեց. վայելելուց յետոյ մոգը տուեց իր հրաժեշտը:

Նա եկաւ հետեւեալ օրը համաձայն իր խոստման և տարաւ Ալադինին մի վաճա-ռականի մօտ, որը վաճառում էր ամեն տե-սակ պատրաստի զգեստներ և զանազան ոփ-րուն կերպաներ և պատուիրեց Ալադինին ընտրելու սրանցից այնպիսիներն, որոնց որ ինքն է զերապասում, որոնց համար նա հատուցումն արաւ: Երբ Ալադինն ինքն ի-րեն այսպէս վայելչօրէն հազնուած գտաւ, չնորհակալութիւն յայտնեց իր հօրեղբօր, որը գիմեց նրան այս խօսքերով, «Քանի, որ զու շուտով վաճառական ես դառ-նալու՝ պատշաճ է, որ դու յաճախես այս

խանութներն և ծանօթանսա նրանց հետ:» Յետոյ ցոյց տուեց նրան ամենասիրուն մղկիթներ, տարաւ նրան պանդոկներ կամ իցնաններ, ուր բնակուում էին վաճառական-ներն և ճանապարհորդները: Այնուհետև դէպի Սուլթանի պալատը՝ վերջ ՚ի վերջոյ բերեց նրան այն պանդոկն ուր ինքն էր ապրում: Գիշերուայ պահին, երբ Ալադին պիտի բա-ժանուէր իր հօրեղբօրից տուն գնալու հա-մար, մոգը չ'թողեց նրան, որ միայնակ գնայ, այլ ընկերացաւ նրան մինչև իր մօր մօտ: Հետեւեալ առաւօտ կանուխ մոգը կրկին գնաց Ալադինի մօտ և առաց. «Այսօրը՝ պի-տի գիւղում անցկացնենք ու վազը՝ կրգնենք խանութը:»

Յետոյ առաջնորդեց նրան քաղաքի զար-պասներից մէկով դէպի մի քանի հոյակապ պալատներ, որոնք ունէին իրենց պատկա-նեալ պարտէզները, որոնց մէջ ամէն որ կա-րող էր մուտք գործել: Այս կերպով մոգն Ալադինին քաշեց պարտէզների յետեն և անցան զնացին, մինչև հասան մօտաւորա-պէս լեռներին: Ի վերջոյ հասան նրանք մի կիրճի, այսինքն այնտեղն՝ ուր մոգը զիտա-ւորուած էր գործադրել իր նպատակ, որը Աֆրիկայից-2ինաստանն էր բերել նրան:

Հիմա այլևս հետի չ'ենք կնայ» ասաց նա, «այստեղ ես քեզ ցոյց կըտամ մի քանի արտաքոյ կարգի բաներ, բայց մինչ ես կրակ կըկպցնեմ դու հաւաքի՞ր կրկուտ<sup>1)</sup> որքան կարող ես տեսնել, նրանցով մի կրակ վառելու:» Ալաղինն այնքան կրկուտ հաւաքեց, որոնցով մի մեծ դէղ շինեց: Մոզը կացրեց խկոյն, երբ բոցավառում էր, նետեց կրակի մէջ մի քիչ ծխանելիք: Նա դեռ հազիւ էր այսպէս արել երբ բացուեց գետին ճիշդ ու ճիշդ մոզի առաջ և երևաց մի քար, որին միացրած էր մի պղնձեայ օղակ: Ալաղինն այնքան վախեցաւ, որ բաց կըփախչէր՝ եթէ մոզը նրան պինդ բռնած և մի այնպիսի բռունցքով ականջին տուած և վայր գրած շ'ինէր:

Ալաղին գողգղալէն և արտասուալից աշերով վերկացաւ. նրան հարցրեց թէ՝ ինքն ինչ է արել: «Մի վախենար» ասաց նա, որովհետև ես ոչինչ չ'եմ ուզում քեզնից բացի ճշտապահօրէն ինձ հնապանդուելուց: Ուրեմն իմացիր, որ այս քարի տակ գաղուած է մի զանձ քեզ վիճակուած, որը քեզ աւելի կըհարստացնի քան աշխարհիս ամենամեծ միապետը: Ոչ ոքի արտօնուած չ'է բացի քեզ-

<sup>1)</sup> Ծ. թ. Թափթափուած չոր փայտեր:

նից այս քարը բարձրացնելու և այրը մըտնելու, ուստի դու պէտք է անես այն՝ ինչ որ ես կըհամացէմ, որովհետև մեծ կարևորութիւն ունեցող մի խնդիր է առ երկուսից համար էլ. օղակից պինդ բռնիր և բարձրացրու քարը:» Ալաղին պատասխանեց. «Արդարե՛ ես այնքան զօրեղ չ'եմ, դու պէտք է օգնես ինձ:» «Դու իմ օգութեան կարիք չ'ունես,» պատասխանեց մոզը, եթէ ես օգնեմ քեղ, մենք ոչինչ չ'ենք կարող անել: Պինդ բռնիր օղակն և բարձրացրու, դու պիտի տեսնես որ հեշտ կ'բարձրանայ:» Ալաղին կատարեց մոզի պատուէրը, բարձրացրեց քարը և դրեց մի կողմ:

Յետոյ այստեղ նկատուեց դէպի մի դուռառաջնորդով մի սանդուղ. «Իջիր այն աստիճաններից և բաց այն գոււալ» ասաց մոզը: «Այն կ'առաջնորդի քեզ դէպի մի պալատ բաժանաւած երեք դահլիճների: Սրանց իւրաքանչիւրում պիտի տեսնես չորս պղնձէ աւաղաններ լի ոսկով և արծաթով, բայց նրանց ձեռք չ'զպցնես: Նախ քան առաջին զահլիճ մտնելդ, զգուշացիր, շորերդ բարձրացրու և փաթաթիր քո շուրջ և անցիր երկրորդի միջով դէպի երրորդն առանց կանգ տոնելու: Ամեն բանից առաջ զգուշացիր, որ չ'զպչես պա-

տերին, որովհետև եթէ պաշես խսկոյն կրտես՝  
նեօ: երբորդ զահլիճի ծայրում կը գտնես մի  
դուռ, որը բացւում է մի պարտէզի մէջ պըտ-  
դատու ծառերով բեռնաւորուած: Քայլիր  
պարտէզի միջով զէպի մի պատշգամբ. ուր  
կրտեսնես առաջդ մի պատուան, և որի մէջ  
մի վառուած ճրագ:

Ճրագը ցած բեր և հանգցրու ապա նը-  
րան ինձ բեր: Այս խօսքերից յետոյ մողը  
մի մատանի քաշեց իր մատից և զրեց Ալագ-  
դինի մատներից մէկն ասելով. «Պա մի թա-  
լիսման է ընդգէմ ամեն չարոց՝ որքան ժա-  
մանակ որ ինձ հնագանգես: Գնա վստահա-  
բար և երկուքս էլ կը հարստանանք մեր ամ-  
բողջ կեանքում:»

Ալագդին իջաւ և գտաւ երեք զահլիճ-  
ներ ճիշդ այնպէս՝ ինչպէս մողը նկարագրել  
էր, նա զնաց նրանց միջով մի այնպիսի նա-  
խազգուշութեամբ, որպիսին մտհուան եր-  
կիւզն էր ներշնչում նրան. առանց կանգ  
առնելու անցաւ պարտէզի միջով և պատու-  
հանից ցած բերեց ճրագը: Բայց հէնց որ  
ցած եկաւ պատշգամբից, նա կանգնեց պար-  
տէզում ծառերը դիտելու, որոնք բեռնաւոր-  
ւած էին զանազան զոյնի պտուղներով: Քա-  
նիսը բոլորովին սպիտակ, թափանցիկ պը-

տուղներով, քանիսը պայծառ, թափանցիկ  
ինչպէս բիւրեղ, քանիսը տժգոյն կարմիր,  
ուրիշներ մուգ, քանիսը կանաչ, կապոյտ և  
ծիրանագոյն և միւսները գեղին. մի խօսքով  
կային ամեն զոյնի պտուղներ:

Սպիտակները՝ մարդարիտներ էին, պայ-  
ծառ և թափանցիկ պտուղները՝ աղամանդ-  
ներ, մուգ կարմիրները՝ յակինթներ, կանաչ-  
ները՝ զմբուխտներ, կապոյտները՝ ֆիրուզա-  
ներ, ծիրանագոյները՝ մեղենիկներ և զեղին-  
ները՝ շափիղներ: Ալագդինն անտեղեակ նը-  
րանց արժէքին, նախազանց թուզեր կամ  
խաղողներ բայց նա որոշեց հաւաքել ամեն  
տեսակից մի քիչ, և որոնցով բեռնաւորուած  
առանց իմանալու արժէքները՝ վերագարձաւ ե-  
րեք սրաների միջով և հասաւ այրի զուռն,  
ուր Աֆրիկեցի մողը սպասում էր նրան: Հէնց  
որ Ալագդին նշան տեսաւ, աղազակեց. «Խնդ-  
րեմ՝ հօրեղբայր, պարզիր քո ձեռքն ինձ օդ-  
նելու:» Մոգն ասաց. «Աւաց ճրագը տուր ինձ,  
քեզ քիչ նեղութիւն կը լինի:» Բայց Ալագդին  
մերժեց, այս բանի վերայ մողը գրգռուեց  
ու կատաղեց, որ և նետելով իր խնկեղէննե-  
րից մի քիչ կրակի մէջ՝ արտասանեց երկու  
մոգական բառեր, որի վրայ խոկոյն և թէ կա-  
փարիչ քարն ընկաւ իր նախկին տեղը: Այ-

արարքը համոզեց Ալաղդինին, որ նա իր հօրեղբայր չէ, այլ մի ուրիշ մէկը, որ չար նպատակ ունէր իր վերաբերմամբ։ Իրողութիւնն այն էր, որ նա սովորել էր իր մուգական գրքերից զաղտնիքն և արժէքն այս հրաշալի ճրագին, որի տիրացողն աւելի կրհարստանար քան որիէ թագաւոր. ահա թէ ինչո՞ւ նա 2ինատամնն էր ճանապարհորդել։ Իր արհեստն էլ հասկացնում էր, որ ինքնն իր ձեռքով միայնակ ստանալու իրաւունք չունէր, այլ պիտի ստանար մի ուրիշի ձեռքից որպէս կամաւոր նուէր։ Եյս էր պատճառն, որ Ալաղդինին գործիր շինեց՝ յուսով հնազանդեցնել նրան իր խօսքին և կամքին։

Եթի նա վրիպեցաւ իր նպատակից, որոշեց վերադառնալ Ափրիկա։ Ալաղդին ողաղակեց իր հօրեղբօր, որ ինքը պատրաստ էր ճրագը յանձնել, բայց ի գո՞ւր, որովհետեւ աղաղակները չ'էր կարող լսել։ Նա իշաւ աստիճանների տակ և կրկնեց աղաղակներն արտասուելով։ «Եյս դէպքում՝» ասաց նա. «չ'կայ ուժեղ և զօրաւոր մէկը՝ բացի մեծ և բարձրեալ Աստծոց.» և կցելով իր ձեռները սկսու աղօթել՝ նա անդիտօրէն շփեց այն մատանին, որ մոզը զրել էր իր մատը։

Անմիջապէս զարհուրելի կերպարանքով մի ոզի երևաց և ասաց. «Բ'նչ ես ցանկանում, ես պատրաստ եմ քեզ հնազանդուելու։ Ես ծառայում եմ նրան՝ ով իր մատի վրայ է կրը բում այդ մատանին, որին ծառայում են և ուրիշ սարուկներ.» Ուրիշ ժամանակ լինէր Ալաղդին շատ կը վախենար այսպիսի զարշելի տեսք ունեցող մարդից, սակայն վտանգը ստիպեց պատասխանել նրան. «ով որ էլ լինեա զու՝ ինձ այստեղից ազատիր։» Դեռ հազիւ խօսքը վերջացրել էր, որ նա ինքն իրան տեսաւ այնտեղն՝ ուր մոզը նրան թողել էր, և այժմ ոչ մի նշան այրի կամ բացւածքի՝ ոչ էլ զետնի վրդովմունքի։ Աստծուն շնորհակալ եղաւ, որ մի անզամ ևս լոյս աշխարհ ընկաւ, նա խկոյն վազեց դէպի տուն, պատմեց իր մօրն այն ամենն ինչ-որ պատահել էր իրեն ու խոր քնի մէջ ընկաւ մինչև ուշ հետեւեալ առաւօտը։ Զարթնելիս առաջին բանը, որ ասաց իր մօրը՝ ուտելու մի բան ուղելն էր. «Ափա՛ս, որդիս,» ասաց նա, «չունեմ մի կառը հաց քեզ տալու։» «Մայրիկ,» պատասխանեց Ալաղդին՝ երեկուայ ճրագն, որ ես բերի տուր ինձ, ես կերթամ և զբան կրվաճառեմ ու զոյացած դրամը կրպիտոյացնեմ նախաճաշի, ճաշի և զուցէ ընթ-

ոիքի էլ։» Ալաղգինի մայրը բերեց ճրագի և  
ասաց, «ահաւասիկ դա, բայց շատ կեղտութէ»  
Հենց որ սկսեց չփել զրան, նրա առաջ ցըց-  
ւեց մի սոսկալի ոգի և ասաց նրան որո-  
տալից ձայնով, «ի՞նչ կրցանկայիր ունենալ,  
եռ որպէս ստրուկդ պատրաստ եմ հնագանդ-  
ուել քեզ ինչպէս նաև այն բոլորին, որուայդ  
ճրագի իրանց ձեռքում կ'ունենան։»

Ալաղգինի մայրն ուշաթափուեց բայց Ա-  
լաղգին ճրագը մօր ձեռքից խլեց և վստա-  
հօրէն ոգտն ասաց. «Ես սոված եմ, բեր ինձ  
մի փոքր ուտելու բան։» Ոգին անյայտացաւ  
և րոպէտլէս վերադարձաւ մի արծաթեայ  
մատուցարանով, որի վրայ կային տասն և  
երկու ծածկուած սկաւառակներ նոյն մե-  
տաղից, որոնք պարունակուամ էին ամենահա-  
մեզ կերակուրներ, վեց մեծ սպիտակ հացեր  
երկու ափախներում, երկու չիշ գինի և եր-  
կու արծաթեայ բաժակներ։ Այս բոլորը նա-  
զրեց մի կարպետի վրայ և աներևութացաւ.  
այս քան աեղի ունեցաւ Ալաղգինի մօր ուշ-  
քի զալուց առաջ։ Երբ մայրը սթափուեց՝ չա-  
փազանց զարմացաւ, բայց և այնպէս նրանք  
նախաճաշի նստեցին՝ երբ արդէն ընթրիքի  
ժամանակէր. ուստի մտածեցին, որ ամենալա-  
բանն այն կըլինէր որ միացնէին ճաշն ու

ընթրիքը. այնուամենայնիւ սրանից յետոյ  
նրանք տեսան, որ պաշխիւ<sup>2)</sup>) և միւս օրուայ  
համար բաւական մնացել էր։

*(121-292)* Մինչև միւս գիշերը նրանք ոգու բերած  
ամբողջ պաշարը կերել էին։ Հետևեալ օրն  
Ալաղգին, որը քաղցի մասին մտածելի ան-  
գամ չ'էր կարող տանել՝ արծաթեայ սկաւա-  
ռակներից մէկը գնելով իր բաճկոնի բառակ  
շուտով գնաց վաճառելու։

Դիմելով զէպի մի Հրէայ, որին նա հան-  
դիպեց փողոցներում. նրան մի կողմ տարաւ,  
գուրս բերեց սկաւառակը։ Խորամանկ Հրէան  
առաւ զրան՝ քննեց, հէնց որ տեսաւ բա-  
րծաթ էր՝ հանեց մի ոսկի իր բակից և  
տուեց նրան, թէկ զա սկաւառակի մէկ վաթ-  
սուները որպէս արժէքի մասն էր։ Ալաղգին անձ  
կանօք ստացաւ զրամն և վաղեց առն,  
բայց ճանապարհին գնաց մի հացազործի  
մօտ մանրեց իր զրամը, զնեց մի քանի հա-  
ցի նկանակներ և վերադարձին մնացորդն  
յանձնեց իր մօրն, որը գնաց և առաւ բա-  
ռական պաշար մի միջոցուայ համար։ Սրա-  
նից յետոյ նրանք այս կերսին էին ապրում,  
մինչև հարկից ստիպուած Ալաղգին վաճա-  
ռեց Հրէային տասներկուերրորդ սկաւառա-

<sup>2)</sup> Ս. թ. Ռ.՝ կէս գիշերուաց պահեցի ընթրիք։

կը հաստ հաստ։ Երբ ծախեց վերջին սկաւառակը՝ հերթին եկաւ ափաէին, որն սկաւառակներից տասն անգամ աւելի ծանր էր և որի համար Հրէան տուեց տասնուկի։ Երբ այս ամբողջ դրամները ծախսանեցին, Ալագդին կրկին զիմեց ճրապին։ Նա առաւ իր ձեռքը, տնդղեց այնտեղն՝ ուր մայրը շփել էր աւագով, ինքն ևս շփեց, խելոյն երևաց սպին և ատաց. «Ի՞նչ ես ուզում գու, ես պատրաստ եմ որպէս ստրուկ հնագանգուելու քեզ։»

Ալագդինն ասաց. «Ես քաղցած եմ, մի քիչ ուստեղաւ բան բեր ինձ։» Գևոն ամերեւուր թացաւ և շուտով վերադարձաւ մի մատուցարանով, նոյն թաւով ծածկւած սկաւառակներով ինչպէս առաջ՝ ցած գրեց և ան հետացաւ։

Երբ Ալագդին մի անգամ էլաւեսաւ, որ իրենց պաշարը սպառուել էր, վերցրեց բակաւառակներից մինն և գնաց Հրէային գոտնելու, բայց մի ոսկերչի խանութի մօտով անց նելիս, ոսկերիչը հրաւիրեց նրան իր մօտ և ատաց. «ազնամ ինձ թւում է, որ գու Հրէային մի բան ունիս վաճառելու, որին յաճախ այցելելով տեսնում եմ, բայց թերեւ դու չես իմանում, որ նոտ խարերայ մէկն է. ես կը վճարեմ լիարժէք գին քո վաճառելի

իրերիդ կամ քեզ կ'առաջնորդեմ ուրիշ վաճառականների մօտ, որոնք քեզ չ'են խարին»

Սյս առաջարկը դրդեց Ալագդինին դուրս բերել իր բաճկոնի տակից սկաւառակնուն ցոյց մալ ոսկերչին, որը կշռեց և հաւատացրեց նրան, որ իր ոկտառառակը վաթսուն ոսկի արժէք ունի, որն առաջարկեց վճարել անմիջապէս։

Ալագդին շնորհակալ եղաւ նրանը իր բարեխղճօրէն առևտուր անելուն համար և խոստացու, որ այնուհետեւ որևիցէ ուրիշի մօտ չ'ինայէ Թէպիտ Ալագդին և իր մայրն իրենց ճրագալ ունէին մի անսովոր գանձ, և նրանք կարող էին ունենալ ամեն բան, որ եթէ ցանկանային, այնուամենայնիւ նրանք ապրում էին միննոյն պարզութեամբ ինչպէս առաջ։ Ալագդին յաճախեց վաճառականների խանութներ, ուր նրանք վաճառում էին ոսկերու և արծաթեայ բանուածքներով հանգերձեղիններ, կտաւներ, մետաքսեայ կերպառներ և զօհարեղիններ։ Նա շատ անգամներ մտանակցելով վաճառականների խօսակցութեանց՝ ծանօթացաւ աշխարհի գործերի հետ, որի շնորհիւ յառաջադիմելու ցանկութիւն յղացաւ։ Գոհարափաճառների հետ իր ունեցած ծանօթութեամբ նա խմացաւ, որ իր հաւաքած

պտուղները գունաւորուած ապակիների վոխարէն մեծագին գոհարներ էին, բայց նա խոհեմութիւն ունէր ոչ ոքի չ'յիշելու այս զաղանքքը:

Մի օր երբ Ալադին շրջում էր քաղաքամ՝ լսեց, որ մունետիկ մի հրաման էր յայտարարում ժողովրդին՝ փակուել իրենց տներում և խանութներում, որովհետև Սուլթանի դուստր իշխանուհի Բուգիր բազնիք էր զնալու և վերադառնալու: Այս հրամանն Ալադինին աւելի դրդեց տեսնելու իշխանուհու երեսն և նա որոշեց թաքնուել բազնիքի դրան ետև, այնպէս՝ որ կարող էր լաւ տեսնել նրա երեսը: Իշխանուհու գալուց առաջ նա թաք կացաւ բազնիսի դրան մօտ: Նա շրջապատուած էր տիկինների և նամաֆիշների մեծ բակմութեամբ, որոնք երկու կողմերից և յետեւից զնում էին: Երբ նա հասաւ բազնիսի դուռը՝ վերցրեց քօղլ՝ պատեհութիւն տալով Ալադինին իր երեսը լիտպին տեսնելու: Իշխանուհին մի նշանաւոր գեղեցկուհի էր, նրա աշքերը մեծ, վառ և փայլուն, նրա ժաղիտը դիւթող:

Զարմանալի չէ ուրեմն, որ Ալադին շրլացաւ և դիւթուեց: Իշխանուհու անցնելուց և բազնիս մտնելուց յետոյ՝ նա յետ զարձաւ

և գնաց ատմնը: Նրա մայրը նրան տովորականից աւելի մտածկոտ և տխուր նկատեց. տատի հարցրեց թէ ի՞նչ է պատահել նրան, չ'լինի թէ հիւանդ է: Ապա նա իր մօրը պատմեց և եզրակացրեց յայտնելով: «Ես այնքան եմ սիրում իշխանուհուն, որ չ'եմ կարող արտայալու և որոշել եմ, որ նրա ձեռքը խնդրեմ Սուլթանից:»

Ալադինի մայրը զարմացրով լսեց իր տղի պատմածը, բայց երբ լսեց իշխանուհու հետ պսակուելու մասին, նա բարձրածին ծիծաղեց և ասաց. «Չ'լինի թէ զժուել ես.» «Հաւատացնում եմ քեզ մայրիկ,» ասաց Ալադին, «որ ես խենթ չ'եմ, այլ բոլորովին զգաստ, ես սրոշել եմ խնդրել Սուլթանի դստեր ձեռքը, զրա յաջողութեան համար անցոյս էլ չ'եմ: Ես ունեմ հրաշալի ճրագի և մատանու ստրուկներն, որոնք կ'օգնեն ինձ և դու զիտես թէ ի՞նչպիսի ոյժ է նրանց օգնութիւնը: Ես ունեմ նաև մի ուրիշ զաղտնիք քեզ անելու, այն ապակու կտորներն որ ես քաղել. եմ ստորերկրեայ պալատի պարտէղի ծառերից՝ մեծագին գտնարներ են:

Բաղդադում զտնուած բոլոր թանգագին քարերը չ'են կարելի համեմատել իմի մեծութեան և գեղեցկութեան հետ: Հաւաստի

հասանալարապամերի մօտ՝ թէովէաժողովը՝  
զի բազմութիւնը մեծ էր բայց նա կարո-  
ղացաւ զնալ գիւանատուն, մի ընդառնակ  
որան, որի մատաքը շատ հոյակապ էր: Այդ-  
ուեզ նա կանգնեց Սուլթանի և մեծամեծնե-  
րի առաջ, որոնք նատած էին խորհրդի նրա  
աջ և ձախ կողմեր: Զանազան գործեր կա-  
յին, որոնք ըստ կարգի վիճաբանուեցան: և  
զատուեցին մինչև, որ նիստը վերջացաւ:  
Սուլթանն ենելով վերազարձաւ իր բաժան-  
մոնք սպասարկութեամբ պիտական նախա-  
րարների: Ելազգինի մայրը բաշալերուեց այս շր-  
քեղ գոհարները տեսնելիս, բայց և ոսկաց, թէ  
մի գուցէ այդ մեծ նուիրաբերութեամբ իր  
որդին մատնուի, վերջապէս նա կատարեց  
որդու խնդիրն և խոստացաւ նետեեալ առա-  
ռոտեան չուտով զնալ Սուլթանի ղարատր:

Ելազգինն արևածագից առաջ եկաւ քնից,  
արթնացը իր մօրը՝ առխալելով նրան զնալ  
Սուլթանի պարատը. և եթէ կարելի էր ըն-  
դունելութիւն գտնէր նախքան մեծ վեղիրի  
և պալատականների դիւնում ներկայանալը,  
որ Սուլթանը ամեն օր որոշ ժամին ներ-  
կայ է գտնում:

Մայրը վերցրեց 2ինական ոկառառակը,  
որի մէջ զըել էին գոհարները մի օր առաջ,  
և զնաց զէպի Սուլթանի ապարանքը: Երբ

Վերջապէս հաւատում եմ որ նա իրօք  
հոգնած էր, որովհետեւ նա յանկարծ վերկա-  
ցաւ և չ'էր լսում մեծ բազմութեան, որոնք  
նախազարատուել էին խօսել նրա նետ:  
բայց նա հեռացաւ որին ևս շատ հաւանե-  
ցայ, և իշտ որ ևս ամբողջ համբերութիւնս

կորցրի, նա չափազանց հոգնած էր այնքան եր-  
կար կանգնելով: Սակայն վիսա չ' ունի, ես դար-  
ձեալ կ' երթամ, գուցէ այս անգամ Սուլթանն  
այնքան զբաղուած չ' լինի:» Ալաղղինի մայրը  
զնաց վեց անգամ որոշեալ օրերում, կանգ-  
նեց Սուլթանի ճիշտ դէմն ու դէմը, բայց  
յաջողութիւնը քիչ էր առաջին առաւտուայ  
պէս: Վեցերորդ օրն երբ վերջապէս Սուլթա-  
նը վերադարձաւ իր առանձնարանը, առաց  
իր մեծ վեպիրին. «Ես քանի անգամ է, որ  
նկատում եմ մի ինչ-որ կնոջ անձեռցի  
մէջ ծրաբած մի քանի բաներով, որը շարու-  
նակ գալխա է ամէն օր ունկնդրութեանտ  
արժանանալու: Եթէ մեր յաջորդ ունկնդրու-  
թեան գալու լինի չ' մուտանաք նրան ինձ մօտ  
կանչելու, որպէսզի իմանամ. թէ ինչ է ու-  
զում նա:

Յաջորդ ունկնդրութեան օրն երբ Ալաղ-  
ղինի մայրը զնաց, և բայց սովորութեան  
կանգնեց Սուլթանի դէմը՝ մեծ վեպիր կան-  
չելով գայիսոնակրին մատնանիշ արեց Ալաղ-  
ղինի մօր վրայ, և հրամայեց բերել Սուլթա-  
նի մօտ, կինը հետևեց և երբ մօտեցաւ  
Սուլթանին, վերջինս առաց. «Բարի կին, ես  
քանի օրեր է որ նկատել եմ քեզ կանգնելիս  
դիւնի սկզբից մինչև վերջ. ինչ պործն է

քեզ բերում այստեղ:» Այս խօսքերից յետոյ  
Ալաղղինի մայրը երկրպագեց և բարձրանա-  
լով ասաց. «Թագաւորների թագաւոր, Զեղա-  
նից ներողութիւն եմ խնդրում իմ համար-  
ձակ աղերսներս համար, խնդրում եմ հաւա-  
տիացրէք որ ներում էք ինձ:» «լաւ,» պատաս-  
խանեց Սուլթանը, «ես կըներեմ քեզ ինչ էլ  
լինելու լինի ացդ, խօսիք համարձակ:» Ալաղ-  
ղինի մայրն այս բոլոր նախազգուշութիւն-  
ները գործ դրեց, որովհետեւ վախենում էր  
թագաւորի բարկութիւնից, յետոյ անկեղ-  
ծօրէն յայտնեց նրան այն յանձնարարութիւ-  
նը, որի համար ուղարկել էր իրեն որդին:

Թագաւորն ականչ դրեց առանց ամենատ-  
փաքը բարկութեան, սակայն նախքան որևէ  
պատասխանի, հարցրեց նրան թէ այն ինչ  
է որ նա անձեռցում կապած ունի: Նա  
վերցրեց Զինական սկաւուակը՝ բացեց և  
տուեց թագաւորին, որը շատ զարմացաւ  
երբ տեսաւ թէ՝ ինչ մեծ, զեղեցիկ և թան-  
գագին գոհարներ էին:

Իվելշոյ երբ նա ինքն իրեն եկաւ,  
ընդունեց Ալաղղինի մօր ձեռքից նուէրն  
ասելով. «Ինչ պատուական, ինչ զեղեցիկ,»  
բոլոր գոհարները հիացմամբ չօշափելուց  
յետոյ, նա զարձաւ իր մեծ վեպիրին և

սաց. «ահան, սքանչացիր, զարմացիր և խոս-  
տովանիր, որ քո աչքերով երբէք տեսած  
չես այսքան շքեղ և այսքան գեղեցիկ զո-  
հարները:» Վէպիրն հիացաւ: «Լու,» շարու-  
նակեց Սուլթանը, «ինչ ես ասում գու մի  
աշապիսի նուէրի համար, արդեօք իմ իշխա-  
նուհի զստերս արժանի չէ, և մի՛ թէ ես  
չպէտք է իմ աղջիկը տամ այնպիսի մէկին,  
որը նրան վնահատում է այսքան մեծ զնով:  
«Անշուշտ՝» պատասխանեց մեծ վէպիրն, «այդ  
նուէրն արժանի է իշխանուհուն, սակայն  
խնդրում եմ Զերդ վեհափառութիւնից երեք  
ամիս չնորհել ինձ՝ Զեր որոշումը կայաց-  
նելուց առաջ: Յուսով եմ, որ նախքան այդ  
ժամանակն որդիս, որին Զերդ չնորհին  
արժանացրել էք կրկարողանայ պատրաստել  
մի աւելի աղնիւ նուէր քան Ալազգինինը,  
որը Զերդ վեհափառութեան բոլորովին ան-  
ձանօթ է:»

Սուլթանը խոսացաւ կատարել նրա  
խնդիրն, խկ կնոջն առաց. «բարի կին, զնա-  
տունն և ասա որդուդ, որ ես համաձայնում  
եմ քո ինձ արած առաջարկութեանը, բայց  
ես դեռ մինչև երեք ամիս չ'եմ կարող իմ իշ-  
խանուհի զստերս ամուսնացնել, այդ ժաման-  
ժամանակը լրանողիս կրկին եկ:» Ալազգի

նի մայրը առն վերապարձաւ շտու աւելի  
զոհ քանիթէ ինքն էր սպասում, և առաց իր  
որդուն, որ ինքը զիջող պատասխան էր ըս-  
տացել Սուլթանի բերնից, և որ ինքը կրկին  
պիտի զնար պալատը երեք ամսուց յետոյ:  
Ալազգինն ինքն իրեն մարդկանցից տմե-  
նաերջանիկն զգաց՝ երբ լսեց այս լուրը,  
չնորհակալ եղաւ իր մօրն այդ զործում իր  
կրած նեղութեան համար, որի բարի յա-  
ջողութիւններն այնքան մեծ կարևորութիւն  
ունեին իր հանգստութեան համար, նա համ-  
րում էր անցնող շաբաթներ, օրեր և մին-  
չև անգամ ժամեր: Երբ զրեթէ երեք ա-  
միսը լրացաւ, իւզն սպառած լինելով մալրը  
զնաց մի քիչ զնելու, որը չանկարծ տեսու-  
րնհանուք ցնծութիւն, տները զարգարուած  
էին ոստերով, մետաքսներով, գորգերով, և  
տօնեն որ աշխատում էր ցոյց տալ ուրախու-  
թիւն իր կարօղութեան համաձայն: Փողոց-  
ները հեծեալ պաշտօնեաների բազմութեամբ  
լիքն էին, խրաքանչիւր պաշտօնեայ շրջա-  
պատուած հետեակ խմբերով:

Ալազգինի մայրը հարցրեց խղափոճա-  
ռին թէ ինչ է նշանակում հաստրակաց  
հանգէսների այսքան պատրաստութիւնները:  
«Ո՞րտեղից ես զալիս բարի կին,» ասաց նա,

«որ չես խմանում զիշերս մեծ վէզիրի որ-  
դին ամուսնանում է արքայակատար իշխա-  
նուհի Բուղիրի հետ։ Այս պաշտօնեաներն,  
որոնց դու տեսնում ես, օգնելու են հարա-  
նեկան թափօրը զէպի պալատը տանելու, ուր  
արարողութիւնը պիտի կատարուի։» Ալագ-  
դինի մայրը լսելով այս՝ շուտով վաղեց  
տունը։ «Թրպին,» աղաղակեց նա, «դու կորած  
ես, ոչնչացաւ թագաւորի գատարկ խոստումը։  
Այս զիշեր մեծ վէզիրի որդին կ'ամուս-  
նանայ իշխանուհու հետ։» Ալագդինը շան-  
թահարուեց, բայց ինքն իրեն մտարերեց  
ճրագն ինչպէս և ոգին, որը խոստացել էր  
հնագանդուել իրեն, և առանց հայրոյելու  
Սուլթանին, մեծ վէզիրին կամ նրա որ-  
դուն, մճուց արգելել ամուսնութիւնն եթէ  
հնարաւոր է։ Երթալով իր սենեակը, վեր-  
ցրեց ճրագը, շփեց տուաջուան պէս նոյն  
տեղն, երբ անմիջապէս ոգին երեւաց և տ-  
աց նրան,» Բնչ ես ուզում, ես պատրաստ  
եմ հնագանդուել քեզ որպէս ստրուկդ ինքս  
և ճրագի միւս սարուկները։ «Լսիր ինձ,»  
տաց Ալագդին՝ «Սուլթանի աղջիկն, որ  
խոստացուել էր ինձ որպէս հարսնացու,  
պսակում է այս զիշեր մեծ վէզիրի որդու  
հետ։ Բեր ինձ մօտ երկուսին էլ այստեղ

արարողութիւնից անմիջապէս յետոյ։ «Տէր»  
տաց ոգին, «հնագանդում եմ քեզ։»  
Ալագդին ճաշեց իր մօր հետ՝ ինչպէս  
նրանք սովոր էին, և յետոյ իր առանձնա-  
րան վնաց և նստաւ, սպասելով ողու վե-  
րագարձին համաձայն իր պատուէրների։  
Նոյն ժամանակ հանդէսներն ի պատիւ իշ-  
խանուհու ամուսնութեան՝ մեծ շքով կա-  
տարւում էին Սուլթանի պալատում։  
Վերջապէս արարողութիւնն առարտեցաւ,  
և իշխանուհին ու մեծ վէզիրի որդին վե-  
րագարձան իրենց համար պատրաստուած  
առանձնարան։

Հինց որ նրանք մտան թէչ՝ ու սպա-  
սաւորներին զես հաղիւ էին արձակեր, ճրա-  
գի հաւատարիմ ստրուկն ՚ի մեծ ապշու-  
թին և ՚ի սոսկումն հարսի և փեսայի՝  
բռնեց երկուսին էլ մի աներեսյթ ուժով  
փոխազրեց նրանց Ալագդինի սենեակը։ «Հե-  
ռացրու փեսային,» ասաց Ալագդին ոգուն,  
և «պահիր նրան որպէս բանդարկուած մին-  
չև վաղ արշալուսին և յետոյ վերագարձիր  
նրա հետ միասին այստեղ։» Երբ Ալագդին  
մնաց իշխանուհու հետ միայնակ, նա աշխա-  
տեց մեղմացնել նրա երկիրդն և բացառեց  
նրան իր թագաւոր հօր կատարած զատ-

ճանութիւնն իր վերաբերմամբ:

Ինչեփցէ նա խոստացաւ ըստ կարելայն պատռով վարուել իրեն հետ։ Արշալուսի որոշեալ ժամին՝ ոգին երեաց, յետ բերելով վիսային։ Ալադղինի հրամանի վերայ նա տեղափոխեց հարսին և վիսային միենոյն աներեւթ զօրութեամբ Սուլթանի պալատը։

Միենոյնը նորից պատահեց միւս զիշերն ու միենայն անախորժութեամբ անցաւ զիշերը, նրանք յետ փոխադրուեցին Սուլթանի պալատը։ Դեռ հաղիւ նրանք գնացել էին իրենց առանձնարանն՝ երբ Սուլթանն եկաւ իր զստել հետ հաճոցախօսելու համար, որը պատմեց նրան բոլորն ինչ, որ պատահել էր։ Սուլթանն Այս առարօրինակ լուրերը լոելով խորհրդակցեց մեծ վեզիրին հետ, որից իմանալով որ իր որդին առելի վատ կերպով խաշտանգուած էր մի անտեսանելի զործող ձեռքով. վրձուեց լուծել ամուսնութիւնն և զաղարեցնել բոլոր հանգչւներն, որոնք պիտի տեսին վեռ միջանի օրեր։ Այս յանկարծակի փոփոխութիւնն, որ Սուլթանի մորում տեղի ունեցաւ, զանազան կարծիքների և առկօնների պատճառ զարձաւ։ Ոչ ոք զիտէր բացի Ալադղինից զադոնիքն, որն ամենայն

զգուշութեամբ ծածկում էր, ոչ Սուլթան և ոչ էլ մեծ վեզիր, որոնք մոռացել էին Ալադղինն և իր խնդիրն ամենապատիկ կասկածն անդամ չ'ունէին, որ Ալադղինը մատունէր հարսին ու վիսային պատահած տարօրինակ արկածներում։ Հինց այն օրն, որ Սուլթանի խոստացած երեք ամիսը լրացաւ, Ալադղինի մայրը զնաց պալատն և կանգնեցաւ զիւանի նոյն տեղում։ Թագաւորը նրան կրկին ճանաչեց և տաշարկեց իր վեզիրին նրան բերել իր մօտ։

Երկրպագելուց յետոյ ասաց կինը, «Արքա, ես եկել եմ երեք ամիս լրանալուց յետոյ, որ խնդրեմ Զեղանից կատարել Զեր խոստումն, որ արել էր որդուս վերաբերմամբ։» Սուլթանը քիչ էր կարծում, որ Ալադղինի մօր խնդիրը կարաղ էր լուրջ խրնդիր զանալ և որի մասին երբեք կրկին խօսք լինել։ ապա խորհուրդ արեց իր վեզիրին հետ, որը թելագրեց թէ Սուլթանը պէտք է այնպիսի պայմաններ կապի իր զստեր ամուսնական խնդրի հետ, որ ոչ ոք յետնեալներից, ինչպէս Ալադղին, չ'կարողանան կատարել։ «Բարի կին,» ասաց Սուլթանը, «ուզիղ է, որ թագաւորներ իրենց խօսրի տէր պէտք է լինեն, ինքս էլ պատրաստ եմ խօսքու

պահելու քախտաւորեցնել որդուդ ամուսնացնելով իշխանուհի գտտերս հետ։ Բայց չեմ ամուսնացնի առանց նախքան որդուդ միքանի փորձերի ենթարկելու և իմանալու թէ արդեօք կարող է արքայաժամկել կերպով ապրել, զու կարող ես ասել նրան, որ ես կը կատարեմ իմ խոստումս հէնց որ նա կողարկի ինձ քառասուն ոսկեայ մատուցարան լիք միննոյն տեսակ գոհարներով, որոնց նման արդէն ինձ նուիրել էք։

Դրանց պէտք է բերեն նոյն թուով ու ստրուկներ՝ տուածնորդուած բազմաթիւ երիտասարդ, սպիտակ, զեղեցիկ ստրուկներով, որոնք չքեզորէն հազնուած պէտք է լինեն։ Այս պայմաններով ես պատրաստ եմ տալ իմ իշխանուհի գտտերս նրան։

Գնան և առան նրան սրանք, ես կ'ապասեմ մինչև զու բերես իմ պատասխանը։» Ալադինի մայրը վերապարձաւ։ Ճանապարհին ինքն իրեն ծիծաղեց իր որդու յիմար երևակայութեան վերայ։ «Ո՞ւր» առաց նա, «կարող է զբոնել բազմաթիւ ոսկեայ ափսէներ և այնքան թանգագին քարեր, որ նրանց լցնի։ Դա իր կարողութիւնից զուրս է բոլորովին։» Երբ տուն եկաւ այսպիսի մտքերով պաշարուած առաց Ալադինին իր Սուլթանի հետ ունեցած

տեսակցութեան և պայմանների մտսին, որոնցով կը ամաձայնէր ամուսնացնել իր գտտերը։ «Սուլթանը սպասում է քո պատասխանին անմիջապէս, բայց ես հաւատում եմ, որ նա կարող է բաւական երկար սպասել։»

«Ոչ այնքան երկար մայրիկ, ինչպէս ենթադրում ես,» պատասխանեց Ալադին։ «Այդ պահանջը մի չնչին բան է։ Ես իսկոյն բաւականութիւն կրտամ նրա խնդրին։»

Ալադին գնաց իր սենեակն և կանչեց ճրագի ոգուն ու պահանջեց պատրաստել անմիջապէս նուէրն և ներկայացնել նախքան Սուլթանի առաւօտուայ ունկնդրութիւնը։ Ոգին ցոյց տուեց իր պատրաստակամութիւն ճրագը սեփականացնողին՝ (Ալադինին) և աներեւութացաւ։ Կարճ ժամանակում քառասուն հոգուց բազկացած մի շարք ու լսուկներն՝ առաջնորդութեամբ միհնոյն թուով սպիտակ ստրուկների՝ երևացին Ալադինի ընակարանի դիմաց։

Իւրաքանչիւր ուստրուկը՝ կրում էր իր զլիի վրայ մի ոսկեղին մատուցարան լիք մարգարիտներով, աղամանդներով, յակինթներով և զմրութաներով։ Ապա Ալադին դիմեց իր մօր, «Ճիկին, աղաչում եմ՝ ժամանակ չկորցնէք, նախքան Սուլթանի և դիւանի վերկենալը՝ իր-

ցանկալի, որ զուք վերագառնայիք պարատն  
այս նույըններով, որոնք ինձանից պահանջ  
ունեմ են իբրև օժիտ իշխանութեան հետ ա-  
մուսնանալու համար, թող նա սրանով տես-  
նի թէ ես ինչքան ցերմ և անկեղծ ցանկու-  
թին ունեմ իր դատեր հետ ամուսնանալու  
պատուին արժանանաբ:» Հէնց որ այս ցրեղ  
թափօրն Ալագդինի մօր տատջնորդութեամբ  
իրենց տնից զէպի պարատը ոկտավ քայլեր  
ամբողջ բաղաքը լցուեց ժամավրդի բազմու-  
թեամբ՝ այս մեծ տեսարանը դիտելու փո-  
փաքով: Եւրաքանչիւր ոտրուկի շնորհալի  
ընթացքը, գոհաբագարպ փայլան գտիներն  
և թանգագին քարերով պայծառ ցցանքներն  
իրենց փաթթոցներում, ամենամեծ հիա-  
ցամբ պատճառեցին: Ճիշտ որ՝ ոչինչ չէր  
տեսնուած Սուլթանի պարատում այսքան  
կեղեցիկ և փայլուն: Երբ Սուլթանին յայտ-  
նուեց թափօրի մօտենալը, պատուէրներ  
տուեց ընդունել նրանց, նրանք զնացին  
դիւնասորահի միջով լու կարգապահութեամբ,  
մի մասը զէպի աջ և միւսը զէպի ձախ  
զանալով: Սուլթանի զանի շուրջ մի կիտո-  
րոյրակ կազմելուց յետոյ, ոև սարուկները  
զրին ուկեղէն մատուցարաններ գորգերի զր-  
րայ, երկրպագեցին ճակատները գորգերին

բաելով, ողիստակ ոտրուկներն եռնոյնն արինչ  
երբ նրանք բարձրացան՝ բացին ափսէններն  
և ապա կոնգնեցին բոլորն եռ ձեսքներն ի-  
րենց կրծքերին խաչած: Մինուն ժամին Ս-  
լագդինի մայմն տուաջացաւ զանի ոտրիտով  
և երկրպագերով առաց Սուլթանին: «Սրբն,  
իմ որդիս այնովէս է իմանում, որ այս ըն-  
ծաները շատ աննշան են իշխանութու պատ-  
րին համապատասխանելու: Բայց և այնովէս յոց  
ունի, որ Զերգ վեհափառութիւն: Վկնէ-  
զունի նրանց և իշխանութիւն հաճելի կը-  
դարձնի, բայց որում նա ջանաց կատարել  
բոլոր պայմաններն, որ զուք տուաջարկել էիք:»  
Սուլթանը յազմահարուած այսպիսի ար-  
քայլավայել ցրեղ տեսարաններից՝ առանց  
տարակուտանիքի պատասխանեց Ալագդինի  
մօր խօսքերին, «Քնա՞ և տան որդուկ, որ ես  
սպասում եմ զրկաբաց ընդունել նրան՝ և  
որքան նա աւելի շտապի ընդունել իմ ձեռ-  
քից իշխանութի զոտերս՝ այնքան աւելի մեծ  
հաճոյք կը պատճառի ինձ:» Հէնց որ Սրբ-  
դինի մաքր վերադառն, Սուլթանը վեր-  
ջացքց ոնկնարութիւնն և իր զանից վեր-  
կենալով, հրամացեց իշխանութու սպասարո-  
ներին, որ զոն տանեն ափսէններն իրենց  
աթրուհու օժեակն, ուր նա զնաց զննելու

Նրանց իր դուռեր հետ միասին՝ իր պարագ  
ժամին: Ութսուն ստրուկներին առաջնորդե-  
ցին պալատը. Սուլթանն իշխանուհուն պատ-  
մեց նրանց շքեղ զգեստների մասին, պատ-  
փրեց նրանց բերել նրա օթեակի առաջ,  
որ նա կարողանար տեսնել լուսամուտի վահ-  
գակների միջով համոզուելու համար, որ ին-  
քը չ'էր չափազանցրած նրանց մասին: Մի-  
նոյն ժամին՝ Ալաղինի մայրն էլ տունը  
հասաւ: «Որդի,» ասաց նա, «դու կարող ես  
ուրախանալ, որ հասար քո սրտի մուրագին:

Սուլթանը յայտնեց, որ կըպատկուես իշխա-  
նուհու հետ. նա սպասում է քեզ անհամբեր:

Ալաղին շատ կարճ պատասխանեց և վե-  
րագրածաւ իր սենեակն, ուր նա շինց իր  
ճրագն, որ իսկոյն երևաց հնագանդ ողին:

«Ոգի,» ասաց ալաղին, փոխաղբիր ինձ իս-  
կոյն մի բաղնիս և քեր ինձ համար մի  
ձեռք ամենաշքեղ հանդերձ, որի նման եր-  
բէք հագած չ'լինի ոչ մի թագաւոր: Հազիւ  
բերնից գուրս էր եկել խօսքերը, որ ողին  
անսեսանելի դարձրեց և փոխաղբեց նրան  
մի բաղնիս, շինուած ամեն տեսակ զոյնի  
սիրուն մարմարիսնից. մի շքեղ և ընդարձակ  
սրահ էր՝ ուր տկլորուեց առանց ոչոքից  
տեսնուելու: Ազա նո լու լուացուեց ու

շփուեց գանազան անուշահատ ջրերով: Զա-  
նազան աստիճանի տաքութիւններից անց-  
նելուց յեւոյ, նա դուրս եկաւ միանգամայն  
առաջուանից մի տարբեր մարդ: Իր մորթն  
այնպէս մաքուր էր՝ ինչպէս մի երեխայի, իր  
անձը թեթև և ազատ, և երբ վերապար-  
ձաւ սրահը, նա գտաւ փոխանակ իր աղքա-  
տիկ շորերին մի ձեռք շքեղ հանդերձ, որի  
վրայ ինքն ապշեց: Ոգին օգնեց նրան հապ-  
նել՝ և յետ փոխաղբեց նրան իր սեփական  
սենեակն, ուր խնդրեց նրանից թէ՝ ունէ՞ր  
ուրիշ հրամաններ: «Այս,» ասաց Ալաղին՝  
«քեր ինձ մի նժոյգ, որ զերազանցէ իր  
զեղեցկութեամբ և լաւութեամբ Սուլթանի  
ախոռում գտնուած տմննալաւին, համո-  
պատասխան թամբով ու սանձով:

Բերել նաև քան ստրուկներ, այնպէս  
հազնուած՝ ինչպէս Սուլթանի նուէր տանող-  
ներն՝ իմ կողքերով քայլելու և հետելու  
ինձ. և ուրիշ քսան հոգի էլ երկու շարքով  
առաջիցո գնայու համար: Բայց սրանցից  
մօրս համար բեր վեց ստրուկներ ճոխա-  
պէս հազնուած, որ սպասաւորեն նրան: Ես  
ուզում եմ նաև տառն հազար ուկիներ՝  
տասն առանձին քսակներով: Գնա և ըշ-  
տապիր:» Հինց որ Ալաղին տուեց այս

պատուերներ, սպիտակ աներեւթացաւ. բայց  
խօսին վերտղարձաւ պահանջուած ձիսկու  
քառասուն ստրուկներով, սրսնցից առաջ կը ք  
րում էին ամեն մէկը մի քառկ լիր տասնահա-  
զար լիրայով, և վեց ստրկահիներ, սրսնց  
ամեն մէկը կը լիր զիսի վերայ Ալտգէ<sup>1</sup>  
զինի մօք համար մի արքաբեր տեսակի հա-  
զար, ծրարած մի-մի արծաթահիս մե-  
տաքսեայ ծրարներում, և ներկայացրին Ալտ-  
գինին:

Նա ներկայացնելով վեց ստրկուհիներն  
իր մօրն՝ ասաց նրան, հագուստներն իր գոր-  
ծածութեան համար էին բերուած: Տուր քը-  
սակներից Ալտգին չորսն առաւ և իր մօրը  
տուեց. միւս վեցը՝ թողեց բերող ստրուկնե-  
րի ձեռքը՝ պատուիրելով նրանց բուռ բուռ  
թափել ժողովրդի մէջ՝ Սուլթանի պալատը  
վնայիս: Եւ նրանց հրամայեց իր աստղից  
զնալ, երեքն աշխից՝ երեքն Էլ ձախից: Երբ  
որ Ալտգին աշտակէս պատրաստեց իր աստ-  
ղին աեսակցութեան համար՝ նա արձակեց  
սպոն, և հեծաւ իր նժոյզը, սկսաւ վնացքը:  
Թէպէտե նա առաջ երբէք ձի հեծած չ'էր,  
բայց և այնպէս՝ այնքան չնորհալի երեաց,  
որ ամենափորձուած ձիսորր կարող էր նա-  
խանձել նրան:

Փողովուրդն՝ որի միջով անցնում էր,  
կեցցէների աղաղակներով օդը թնգացնում  
էր, մանաւազնդ երբ ամեն անգամ վեց քը-  
սակների ստրուկները բուռ բուռ ոսկիներ  
էին տեղացնում ժողովրդի մէջ:

Ալտգին պալատը համելիս՝ Սուլթանը  
զարմացաւ աեսնելով, որ իրենից աւելի ճսի  
և շքեզօրէն հագնուած էր՝ քան երրեխցէ  
ինիքն էր հազել: Նրան շատ ազգեց նաև  
Ալտգինի կեղեցիկ գիմքը և վահմ ընթաց-  
ըր, որ այնքան անսպասելի էր նուատ զա-  
ռակարգին պատկանող Ալտգինից:

Սուլթանն ուրախութեամբ զրկեց Ալտ-  
գինին, որ ուզում էր իրեն նետել նրա ոտ-  
ների ասաց՝ որբ բնեց և նստեցըց իր գա-  
հի մօտ: Քիչ յետոյ առաջնորդեց նրան  
փողարների և ամեն տեսակ նուազածու-  
թինների ձայներով մի շքեղ խնջոյքի, որ  
Սուլթանն և Ալտգին ճաշեցին աւանձին,  
պետաւթեան աւագանիներն իւրաքանչիւրն  
իր կարգի և աստիճանի համեմատ՝ նստեցին  
տաքրեր սեղանների վերայ:

Ճաշից յետոյ Սուլթանը կոչեց զիսաւը  
զագին և հրամայեց նրան գրել մի ամուսնա-  
կան պայմանագիր իշխանուհի Բուզիրին Ալտ-  
գինի միջև: Երբ պայմանաթողիթը պատրա-

տուեց, Սուլթանը հարցրեց Ալաղդինին թէ՝ արդեօք կ'ուզէ՞ր մնալ պալատը՝ կատարելու այդ օր պտակի արարողութիւնները։ «Երբա՛,» ասաց Ալաղդին, «թէպէտ մեծ է իմ անհամբերութիւնն ընդունելու Զերդ վեհափառութեան ինձ չնորհած պատիւները՝ բայց և այնպէս խնդրում եմ Զեղանից՝ թուլատրել ինձ նախ կառուցանել Զեր իշխանուհի դուեր պատուին վայել մի պալատ, նրան ընդունելու համար։ Խնդրեմ չնորհել ինձ բաւականաշափ գետին՝ ձեր պալատի մօտ, ես իմ ճիզը գործ կըզնեմ շուտով աւարտել։ Սուլթանն՝ Ալաղդինին չնորհեց իր խընդրածն՝ որից յետոյ վերջինս մնաս բարով ասաց՝ այնքան քաղաքավարութեամբ, որ կարծես միշտ պալատումն էր ապրել և մեծացել։ Ալաղդին տուն վերապարձաւ ժողովրդի կեցցէների միջով, որոնք ցանկանում էին նրան երջանկութիւն և յաջողութիւն։ Հենց որ ձիուց իջաւ առաւ ճրագն՝ և ոզուն կոչեց ըստ սովորութեան, որն իսկոյն ցոյց տուեց իր պատրաստակամութիւնը։ «Ոզի՞» ասաց Ալաղդին, իշխանուհուն ընդունելու համար մի յարմար պալատ շինիր։ Թոնդ նրութիւնները լոկ ամենազեղեցիկ մարմարից լինեն, թոնդ պատերը շարուած լինեն համակ

սակեայ և արծաթեալ տղիւաներով մէջէ-մէջ։ Թոնդ իւրաքանչիւր ճակատը պարունակի վեց խոսամուտներ և թոնդ լուսամուտների վանդակները՝ բայցի մէկից որ պէտք է կիաստ թողնուի՝ զարգարուեն ազամանդներով, յակինթներով և զմբուխաներով՝ այնպէս, որ նրանք գերազանցեն աշխարհիու մէջ աեսնուած նոյնատեսակ բաներ։ Թոնդ պալատի դիմաց լինի ներքին բակ, նաև մի պարտէզ, բայց ամենից աւելի՝ պատրաստիր մի ապահով զանձատուն և լցրուածով ու արծաթով։ Թոնդ այնտեղ լինեն նաև խոնանցներ և շտեմարաններ, ախտոներ աւմենասիրուն ձիերով, ձիապաններով, ոլաշոնեաներով, ծասաններով և ստրուկներով, երկու սեռից ևս՝ կազմակերպելու մի շքախումբ իշխանուհու և ինձ համար։ Գնա և իշխապործիր ուզածներու։ Արևն արդէն մտել էր երբ Ոզուն հրամաններ տուեց։ Հետեւեալ տուաւոտ՝ արևածագին ներկայացաւ, կատարած լինելով Ալաղդինի յանձնարարութիւնները, փախազրեց նրան բուլէտապէս իր շինած պալատը։ Ոզին ասացնորդեց նրան բարոր բաժանմանըները, նա տեսաւ, որ իր պատուէրները կատարաւել են։ Երբ Սուլթանի գոնապահներն եկան դարպաներ բանա-

յու ապուշ կտրեցան տեսնելով թէ ինչպէս  
կատարի պարտէզը լցուել էր հոյակառ որո-  
լառով ու մի շքեղ զորգ փուռած էր ամ-  
րող ճանապարհի երկարութեամբ մինչեւ  
Սուլթանի պարտոր՝ նրանք պատմեցին մեծ  
մվզիրին օտարոտի լուրերը՝ նա էլ յայտնից  
Սուլթանին, որ բացազանչեց. «Պա Ալադինի  
ի պալատը ոլէտք է լինի, որ թողլարեցի  
շինելու դատերս համար. նա ցանկացել է մեզ  
զարմացնել, թողէք տեսնենք դա ի՞նչ հրաշք  
է, որ միայն մի գիշերուայ մէջ կատարուեց»:

Ալադինն ոգու ձեռքով ասրուեց իր  
ուփական տան, խնդրեց իր մօրից զնող իշ-  
խոնուհու մօտ և ասել նրան, որ իր ընդունելու-  
թեան համար պալատը դուռքառաս կըդինի  
երեկոյեան: Ալադինի մաշրը զնաց իր բա-  
ռորդուհիների ովասարկութեամբ նոյն կար-  
գով ինչպէս նախընթաց օրը Խշխանուհա-  
րնակարան հասնելուց քիչ յետոյ՝ Սուլթանին  
էլ ներս եկաւ զարմացաւ, տեսնելով նրան  
այս անզատ իր աղջկանից աւելի շքեղօրէն  
զուքուած, որին նա ճանաչել էր հասարակ  
չորերում: Այս հանգամանին Ալադինի մա-  
սնին աւելի լու զարափար կազմել տուեց  
այս անզատ, որ այսպէս էր ինտուու իր  
մօրը՝ մասնակից անելով նրան իր հայր-

առ թեան և փասքին: —Մօր մեկնելաց քիչ  
յետոյ՝ Ալադինը հեծնելով իր հժոյզը՝ սպա-  
սարկութեամբ իր շքախմբի, բաժանուեց հո-  
րենական անից ընդմիշտ՝ ու զնաց պալատը  
միևնույն շքով ինչպէս նախորդ օրը: Չ'մոտ-  
ցաւ հետը տանել հրաշալի ճրագը, որին էլ  
պարանական իր ամբողջ բարեխախտութիւնը.  
ոչ էլ մոռացաւ զնել մատր մատանին, ու սրբ  
արտած էր իրեն որպէս բարիաման: Կամ  
Սուլթանը հիւրամիրեց Ալադինին փառառը  
կերպով, զիշեր պատկի արարողութիւնը վեր-  
ցանալիս՝ Խշխանուհին իր հօր ձեռքը համ-  
բուրելով հեռացաւ: Նուազած աների խմբեր  
առաջնորդեցին թափօրը հետեւորդ հարիսը  
սետական բարանդաներով, Սուլթանի չորս  
հարիսը զեսատի մտնելու իկներն էլ կրամ էին  
զաներ երկու կողքերով, որոնք Սուլթանի և  
Ալադինի պարաների լուսավառութիւննե-  
րավ գիշերը ցերեկ էին զարձել:

Այս կերպով տարուեցին Խշխանուհին և  
Ալադինի մայրն ևս՝ իրենց առանձին-առան-  
ձին գահաւորակներով՝ ստրկուհիների սպա-  
սարկութեամբ՝ Սուլթանի պալատից մինչեւ  
Ալադինի պալատը փուռած զորգի վրայավ:  
Ալադինին ժամանելիս՝ Ալադին որ պատ-  
իշխանուհին ժամանելիս՝ Ալադին որ պատ-



սաջնորդեց մի ընդարձակ սրահ, ուր պատրաստուած էր մի պատուական ճաշ։ Սկուառակներն ուկեղէն էին և պարունակուած էին ամենահամեղ կերակուրներ։ Ծայլկամանները, թաղաներն և բաժակները՝ բոլորն էլ ուկեղէն ընտիր արտեստակերտներ էին։

Իշխանուհին յափչտակուեց՝ այսքան ահազին հարստութեան մի տեղ կիտուած լինելը տեսնելիս։ ուստի ասաց Ալագդինին, «իշխան, ես կարծում էի, որ աշխարհում չ'կայ մի բան, որ իր գեղեցկութեամբ հաւասարուի հօրս պալատին, բայց միայն այս սրահի տեսարանը հերիք է ցոյց տալու, որ ես սխալուած եմ։» Ճաշից յետոյ ներս մտոն սվարսիների մի խումբ, որոնք խաղացին երկրի սովորութեան համաձայն, երգելով միևնուն ժամանակ զովասանական սուսնաւորներ ի պատիւ հարսի և փետայի։

Հետեւեալ առաւօտ՝ Ալագդին հրամայեց նմույներից մինը պատրաստել, հեծառ շրջապատուած զինուորներով և սորտեներով ու զնաց Սուլթանի պալատը ինզրելու նրան զալ հացկերոյթի իշխանունու պալատը՝ մեծ վեղիրի և բոլոր պալատականների հետ։

Սուլթանը հաճութեամբ ընդունեց և շրջապատուած իր ամբողջ պալատականներով՝

Ալագդինի ընկերակցութեամբ զնաց։ Որքան Սուլթանն աւելի էր մօտենում, Ալագդինի պայլատին՝ այնքան աւելի տարւում էր նրա զեղեցկութեամբ, բայց երբ ներս մտաւ և եկաւ սրահը, տեսաւ զուսամսսները զարդարուած ագամանդներով, յակինթներով և զմրուխտներով՝ բոլորը՝ մեծագին քարերով։ Նա բոլորովին զարմացաւ և ատաց իր սպիտին, «այս պալատն աշխարհին հրաշալիքներից մէկն է, սրավինետե ուր՝ աշխարհի որ կողմն էլ լինի՝ մենք կարող ենք գտնել ու կեշար և արծաթաշար պատեր, աղամանդներով, յակինթներով և զմրուխտներով զարդարուած լուսամուտներ։ բայց ինչ ինձ առելի շատ է զարմացնում՝ զա այն է, որ մի այսպիսի շրեղ գահին լուսամուտներից մէկը կիսատ է։» — «Վեհափառ Տէր,» պատասխանեց Ալագդին, «զանցառութիւնը խորհրդով է եղել, որովհետե ես ցանկացայ որ այս սրահի աւաբաման փառքը Զեղ մերազուի։» Սուլթանն ասաց, «Ես հաճութեամբ ընդունում եմ բու ձեր զինուորութեան՝ տարտելու զործը, կը հրամայեմ զրա մասին անմիջապէս։» — Այս փառաւոր խնջոյքից յետոյ՝ յայտնեցին իրեն, որ զսհարավաճաներն և ուկերիչները պատրաստ են ծառա-

յելու, որի վերայ նու զահլիճը վերապարձան  
և նրանց ցոյց տուեց կիսաստ լուսամտարք:  
«Ես ուղարկում եմ ձեզ,» ասաց Սուլիմա-  
նը, «շինելու այդ լուսամտար՝ միւսների նր-  
ման կատարեալ: — Էսո քննեցէք նրանց և  
շտապեցէք ինչ քան կարող էք:» Գոհարա-  
վաճառներն և ուղերիչները մեծագուշակրտ-  
թեամբ քննեցին քաններեք լուսամտաներն  
և միասին խորհրդակցելուց լիտոյ: թէ առ  
մեն մէկն իրենցից ինչ կարող էլ հայթայց  
թել, վերապարձան և առացին, «Վեհափառ  
Տէր, մենք բոլորովին յօժար մնք մեր ամե-  
նավերջին ճիպը թափել և ոչխռտել Ձեզ  
հնագանգուելու, բայց մենք շենք կարող այն-  
քան գոհարներ մատակարարել, որ բաւակա-  
նանայ մի այդպիսի մեծ զործի համար:»

«Ես պէտք եղածից աւելին ունեմ,» առ  
այց Սուլիմանը, «Եկէք իմ պալատն այնտեղ  
կը լուսարկե ինչ ձեր բանին կը գայ:» Այսպէս  
նա հրամայեց իր զոհարներ զորդ բերել,  
գոհարափառառներ վերցրին մեծ քանակու-  
թեամբ, մասնաւորապէս Ալաղինի նախրած-  
ներից. նրանք շտապի զործ զրուեցին, բայց  
և այնպէս զործը կիսաստ մնաց: Մի խօսքով  
նրանք զործածեցին Սուլիմանի ունեցած բա-  
րոր զոհարները՝ նաև վէղիրից փոխ առած-

ները, բայց այնու ամենայնիւ զեռ գործը  
չ'էր կիսուել: Երբ Ալաղինն իմացաւ Սուլ-  
իմանի լուսամտար միւսների նման շինելու  
այդ բոլոր ջանքերն իւզուր են, մարդ առ  
դարկեց զոհարավաճառներին և ուկերիչնե-  
ներին, հրամայելով նրանց՝ քանուիլ ինչ շի-  
նել էին և դարձնել բոլոր զոհարները Սուլ-  
իմանին և վէղիրին: Նրանք քանզեցին մի-  
քանի ժամուայ մէջ, ինչ շինել էին վեց շտ-  
րաթուայ լինթացքում և վերադարձան, սրա-  
համ թողնելով Ալաղինին միայնակ: նա  
վերցրեց ճրագն, որ իր վերայ ոէր կրում,  
շփեց և իսկոյն երեաց Սպին. «Ոգին,» ասաց  
Ալաղին, «ես հրամայում եմ քեզ, որ այս  
գոհալիճի քաննեչորս լուսամտաներից կիսան  
թողնուածը՝ շինես միւսների նման, իմ հր-  
րամանները կը զարծագիւ խկոյն: Ոգին ան-  
միջապէս աներեւութացաւ: Ալաղին զուրս  
զնաց զահլիճ և շուտով վերապարձաւ՝ աե-  
սաւ լուսամտան իր ցանկացածի պէս միւս-  
ների նման շինուած: — Միևնոյն ժամանակ  
Սուլիմանը հրամայեց մի ձի բերել, հեծաւ և  
զէտի իր վիետայի պալտարը զնաց հարցնե-  
լու թէ՝ ինչու հրամայել էր լուսամտար լրաց-  
նելու զործը դադարեցնել:

Ալաղին հանողիուեց նրան զարպառում և աւ-

ուանց ունէ պատամխան տալունրա հարցերին, տաճնորդեց սրանն, ուր Սուլթանն ի մեծ զար- մացումն իր՝ գտաւ անկատար թօղնուած լու- սամուտը ճիշտ համապատասխան միւնիքին։ «Որդին,» ասաց նա, «ի՞նչպիսի մարդ ես որ միշտ այսպիսի զարմանալի բաներ ես անում մի ակնթարթում։ Աշխարհումս քիզ նման մարդ չ'կայ, որքան աւելի եմ ճանա- չում քեզ, այնքան աւելի եմ հիանում քս վերայ։» — Ալաղդինը միշտ չ'փակուեց իր պալատում, նա յաճախ զուրս էր զնում, և ամեն գուրս վնալիս՝ հետք վերցնում էր եր- կու սորուկներ, որոնք քայլում էին իր ձի- երի երկու կողմով և բուռ բուռ պրամներ սր- փուտմ իր անցած փողոցների և հրապարակ- ների ժողովրդի մէջ։ Նա իր այս բարեսրտութեամբ շահեց ժողովրդի սէրն և օրնութիւնը։ Մինչ Ա- լաղդինն այսպէս ցոյց էր տալիս իր փառ- քը Սուլթանին, մինչոյն ժամանակն ևս իր տառածեսնութեամբ զբաւում էր ժողովր- դի սէրն և համակրանքը։

Ալաղդինն այսպէս շարանակեց մի- քանի տարիներ, մինչև մի օր՝ երբ Աֆրի- կեցի մոզը մերապարձաւ։ Արքան եղաւ նրա զարմանքն երբ նա տեսաւ Ալաղդինին,

որ փոխանակ ալրի մէջ մեռնելու՝ յաջողեց- րել էր իր պահանուսոն և ապրում էր թագա- ւորական փառքով հրաշալի ճրագի և Ռգու- ովիութեամբ։ Հենց որ տեսաւ իշխոն Ալաղ- դինի հրաշալի պալատը՝ իմացաւ, որ ոչ ո- քի արած չ'էր՝ եթէ ոչ ովիների արածք — ճր- բագի ոտքուկներինը, որոնք միայն կարող էին կատարել այսպիսի հրաշքներ։ Ի մեծ ուրախութիւն իր՝ իմացաւ, որ գեռ ճրագը պալատումն է։ «Լաւ,» ասաց նա՝ իր ձեռնե- րը շփելով բերկրութեամբ, «ես ճրագը ձեռք կըբերեմ և Ալաղդինին կըվերապարձնեմ իր նախկին նուաստ վիճակին։

Միւս օր մագն իմացաւ, որ Ալաղդինն որպի էր զնացել, որ պիտի տեէր ութն օր. և որից միայն երեքն էր անցել։ Մոգն էլ հէնց այդ էր ուզում։ Նա վճռեց ժրագիրն իսկոյն գործադրել։ Գնաց նա մի զարբնի մօտ ուզեց մի երկոտասանեակ երկաթեայ կանգել ներ։ Դարբինն ասաց, որ այնքան չ'ունէր պատ- րաստի, բայց եթէ նա կըհամբերէր մինչև միւս օքր՝ կըպատրաստէր։ Մոգը ժամանակ որոշեց և փափաք յայտնեց նրան՝ ուշադիր լինել, որ սիրուն և կոկիկ զորս զան։ Միւս օրը Մոգն ստացաւ տասներկու կանդեզներն և տասու զր- ճորելով չինողին՝ դրեց մի զամբիւղի մէջ, և

կախելով թեից գնաց դէպի Ալագդինի պարատք:  
 Հենց որ նա մօտեցաւ՝ սկսեց ձայնել. «Ով  
 հին կանդեղներ նորի հետ կը փոխի:»  
 Երբ կամաց կամաց դէպի առաջ գնաց, երե-  
 խաների մի բազմութիւն կիտաւեց՝ որոնք  
 ինչպէս և բոլոր պատահաբար անցնողները,  
 ճշճում էին և կարծում, որ նա մի խենթ՝ տրխ-  
 մար մարդ պիտի լինի, որ առաջարկում է  
 նոր կանդեղ փոխել հնի հետ:  
 Մոզը դեռ ևս շարունակում էր իր կանչը,  
 ով կը փոխի հին կանդեղներ նորի հետ:»  
 Նա յաճախ այսպէս էր կրկնում յետ ու յա-  
 ռաջ գնալով գալով պալատի դիմաց. Իշխա-  
 նունին լսելով մի ինչ-որ մարդու ձայնը՝ և  
 տեսնելով մեծ բազմութիւն հաւաքուած նրա  
 շուրջ, ուղարկեց իր ստրկունիներից մէկին  
 իմանալու համար թէ՛ ինչ է ձայնում նա:

Ստրկունին յետ դարձաւ այնպէս հոհր-  
 սալով, որ Իշխանունին նրան կշտամբեց:  
 «Տիկին,» պատասխանեց ստրկունին՝ դեռ  
 իո քրջալով, «ով կարող է զսպել իր ծիծա-  
 զը, տեսնելով մի ծերուկ մարդու, որ սիրուն  
 կանդեղներով լի զամբիւզը թեից անցրած  
 խնդրելիս լինի՝ փոխել սիրուն նոր կանդեղ-  
 ները հների հետ:» Մի ստրուկ այս լսելով  
 տօսաց. «Հիմա դուք խօսում էք կանդեղների

մասին. Ես չ'գիտեմ արդեօք Իշխանունին  
 տեսնէլ է, որ մի հին ճրագ գրուած է իշ-  
 խան Ալագդինի հանդերձատան պատուհանում,  
 ով էլ, որ լինի դրա տէրը չ'ի տիրի՝ տես-  
 նելով դրա տեղ մէկ նորը, եթէ Իշխանու-  
 նին կամենայ կարող է փորձել թէ՛ ինչպէս  
 այս ծերուկը նոր կանդեղներ հների հետ փո-  
 խելու շափ յիմար է:» Իշխանունին որ չ'եր  
 իմանում այս ճրագի արժէքն ու նշանակու-  
 թիւնը, փորձելու համար հրամայեց ստրու-  
 կին՝ տանել ու փոխել: Ստրուկը շուտով զը-  
 նաց պալատի գարպաների մօտ և Մոզին  
 կանչեց ու ցոյց տալով հին ճրագն ասաց,  
 «տուր ինձ մի նոր՝ սրա փոխարէն:» Մոզն իս-  
 կոյն հասկացաւ որ իր ուզած ճրագն էր: Նա  
 յափշտակեց ստրուկի ձեռքից և խրեց ծոցի  
 մինչև խորը՝ որքան կարող էր. ապա մօ-  
 տեցրեց նրան զամբիւզն և առաջ՝ ջոկի՞ր որ  
 մէկն որ ամենից շատ ես սիրում: Ստրուկը՝  
 մէկն առաւ և տարաւ Իշխանունուն: Աֆրի-  
 կեցի Մոզն էլ երկար չ'կեցաւ, ոչ էլ կան-  
 չեց, «Նոր կանդեղներ հների փոխարէն,» այլ  
 աճապարեց հեռանալ: Հենց որ անհետացաւ,  
 աճապարեց անցնել ամենախուլ փողոցներից  
 մինչև հաստ քաղաքի գարպաներից մէկի  
 մօտ և ապա այնտեղից մի առանձին տեղ,

որ ապասեց մինչև բոլորովին մթնեց. յետոյ դարս հանեց ճրագն ու շփեց. Ոզին իսկոյն երեաց և ասաց, «Ի՞նչ ես ուզում, պատրաստ եմ հնապանդուել քեզ որպէս ստրուկդ և որպէս այն բոլորի պարուկ, որոնք իրենց ձեռքում ունեն այդ ճրագը»՝ պատասխանեց Մոգը, «Փոխադրել անմիջապէս Աքրիկո՛ ինձ և այն պալատը իր մէջ եղածներով, որ դու և ճրագի միասարուկներն էք շինել այս քաղաքում։

Ոզին անմիջապէս փոխադրեց նրան և ամբողջ պալատն իր ուզած տեղը։ Հետեւեալ առաօտ կանուխ՝ Սուլթանն ըստ իր սովորութեան գնաց Ալադղինի պալատը հիանալու, նրա ապշտոթիւնն անօանման եղաւ, երբ նա ոչինչ չ'տեսաւ։ Նա չ'էր կարող ըմբռնել թէ՝ ինչպէս այնքան մեծ պալատը, որ նա տարիների ընթացքում պարզօրին տեսել էր ամեն օր՝ կարող էր աներեւութանալ այսքան շուտ, չ'թովնելով ամենափոքրիկ հետքն անդամ։ Իր շփոթ գրութեան միջոցին հրամայեց վեզիրին կոչել։ Մեծ վեզիրն, որ շատ լու արամագրութիւն չ'ունէր զէպի Ալադղին, յայտնեց իր կասկածն, որ պալատը կախարդութեամբ էք շինուել՝ և որ Ալադղինի որսի զնալը մի պատրուակ էր իր պա-

լատը տեղափոխելու համար միևնույն յանկարծակիութեամբ ինչպէս շինել էր։ Նա տրամադրեց Սուլթանին որ Ալադղինին ձերբակալէ որպէս քրէական յանցաւոր։ Հէնց որ վեսան իր առաջ քերուեց, չ'էր լսում մի խօսք նրանից, այլ հրամայեց սալանել նրան։ Դատավճիռն այնքան դժգոհութիւն պատճառեց ժողովրդին, -որի սէրը վայելում էր Ալադղինը՝ շնորհիւ իր բարեգործութիւնների, որ Սուլթանը վախենալով ապատամբութիւնից նրա կեանքը շնորհեց։ Երբ Ալադղինը տեսաւ որ ինքն ազատուեց, էլի դիմեց Սուլթանին. «Վեհափառ Տէր, խնդրեմ թոյլ տաք ինձ իմանալ թէ՝ ի՞նչ է իմ մեղքն, որ այսպէս Զեր աչքից ընկել եմ»՝ «Քո մեղքը» պատասխանեց Սուլթանը, «Թշուառական, չ'ես իմանում ինչ է. ինձ հետեւիր եռ ցոյց կրտամ քեզ»։ Ապա Սուլթանը տարա Ալադղինին այն սկսեակն՝ սրտղեից նա ոսկորութիւն ունէր հիացմամբ նայել նրա պալատին, և ասաց, «Դու պէտք է զիտնաս քո պալատի տեղը, անս և ասն ինձ՝ ապա՛ ուր է այս։ Ալադղին նայեց և բոլորովին ապշեց իր պալատի կօրսանեան վրայ՝ ու պատանձուեց։ Յետոյ ինքն իրեն եկաւ ու ասաց, «Պաճիշտ է՝ ես չ'եմ տեսնում սրսլառը՝ դա ան-

հետացած է, բայց վրա տեղափոխութեան խնդրում ես մասնակցութիւն չունեմ: խընդրում եմ տալ ինձ քառասուն օր ժամանակ և եթէ ես չկարողացայ վերականգնել պրան իր տեղն՝ ես իմ գլուխը կրտամ:

«Ճալիս եմ խնդրածդ ժամանակը, բայց քառասուն օրից յետոյ՝ չմոռանաս ինձ ներկայանալ:» Ալազգինը Սուլթանի պալատից դուրս գնաց նուաստացած գրութեամբ: Աւագանիներն որոնք իր փառքի օրերում մեծարում էին նրան, այժմ որևէ յարաբերութիւն չէին զիջում ունենալ նրա հետ. երեք օր թափառեց քաղաքի այս և այն կողմը՝ շարժելով շատերի զարմանքն ու կարեկցութիւնը՝ հանդիպողին իր արած հարցումներով թէ՝ իր պալատը տեսնեն, կամ թէ կարող էին ասել որևէ բան վրա մասին:

Երբորդ օրը թափառեց գիւղեր և հէնց հաստ մի զետի թէ չէ, նա վայր լնկաւ զետեղերքն ի վեր այնքան ուժգին, որ ակամայ շփուեց Մոգի տուած մատանին, այնքան պինդ քառեց ժայռին, որ իսկոյն միննոյն Ոգին երևաց՝ որին այրի մէջն էր տեսել, ուր Մոգը թողել էր: «Ի՞նչ ես ուզում:» առաց Ոգին, «ես պարաստ եմ հնազանդուել քեզ,» Ալազգինը հաճոյքով զարմացաւ այս ան-

ակնկալ օգնութեան վրայ և ասաց, «Ոգի,» ցոյց տոնը ինձ, թէ՝ ուր է այժմ այն պալատը, որի շինութեան պատճառն ես եմ եղել կամ թէ՝ վերադարձրու յետ իր նախկին տեղը:» — «Ճեր հրամանի կատարումը» պատաժիանեց Ոգին, «բոլորովին իմ ոյժերից վեր է, ես միայն մատանու ստրուկն եմ և ոչ ճրագին:» Ալազգինը պատասխանեց, «ուրեմն հրամայում եմ մատանու զօրութեամբ՝ փոխադրել ինձ այնտեղն՝ ուր իմ պալատըն է:» Այս խօսքերն հազիւ էին նրա բերնից դուրս թռել, որ իսկոյն Ոգին փոխադրեց նրան Աֆրիկա, ուր պալատը զրած էր մի քաղաքի մօտ: Ոգին գնելով նրան ճիշտ Խխանուհու պալատի լուսամուտի ներքեւ աներեսութացաւ: — Այսպէս իր պալատի մօտ զբուելուց քիչ յետոյ՝ իշխանուհու ստրուկներից մէկը լուսամուտից նայելով նկատեց նըրան, և իսկոյն ասաց իր տիրուհուն: Իշխանուհին՝ որ չէր կարող հաւատալ ուրախալի լուրին՝ անձամբ աճապարեց զէպի լուսամուտն և տեսնելով Ալազգինին՝ անմիջապէս բացեց փեղկը՝ լուսամուտի բացուելու ձայնն Ալազգինը լսելով իր գլուխը բարձրացրեց, և տեսնելով Խխանուհուն՝ ողջունեց նրան ուրախութիւն արտադապող մի գէմքով: «Փամա-

հակ չկորցնելու համար,» ասաց, «Ես ուղարկել եմ քանալու գաղտնի դուռը քեզ համար՝ մտիր և եկ վերև:» Գաղտնի դուռը, որ ճիշտ Խչսանուհու օթեակի ներքեն էր՝ շուտով բացուեց և Ալագդին գնաց վերև: Անկարելի է այտայայտել երկուսի ուրախութիւնն ևս իրարտեսնելիս մի այդպիսի դժնդակ անջատումից յետոյ. գրեախառնուելուց և արտասուելուց վերջ՝ նստան, և Ալագդինը խօսեց. «Ես խրնդրում եմ քեզանից Խչսանուհի, առաջ ինձ, ինչ եղաւ այն հին ճրագլ, որ գրած էր իմ հանդերձատանը:» — «Ափսոս,» պատասխանեց Խչսանուհին, «Երկիւզ եմ կրում, որ մեր դժբախտութեան պատճառն այդ ճրագն է, և ինչ-որ ինձ շատ վիշտ է ովատճառում՝ այն է՝ որ ես եմ եղել զրա սպատճառը: Ետք բաւական յիմարացայ պիսելու հինք-նորի հեաւ և հետեւել առաւօտն եռ ինքս ինձ այս անծանօթ երկրում զտայ, որ ինչպէս ինձ առել են Աֆրիկան է:» — «Խչսանուհի» ասաց Ալագդին-ընդմիջելով նրան, «դու բոլորը բացարեցիր ինձ ասելով, որ մենք Աֆրիկայումն ենք: Ես ցանկանում եմ, որ դու միայն ինձ ասես թէ՝ իմանում ես ուր է հին ճրագը:» Աֆրիկեցի մոզը նրան կրում է իր ծոցում զգուշորէն,» ասաց Խչսանուհին,

«Ես այս բանը կարող եմ քեզ հաւատացնել, որովհետեւ նա կուրտ հանեց իմ տուած կյաղթական կերպով ցոյց տուեց ինձ:» Ալագդինն առաց, «Խչսանուհի ես կարծում եմ միջոցը գտել եմ քեզ ազատելու և վերստին ճրագին տիրանալու, որից կախուած է մեր ամբողջ յաջողութիւնը:» — Այս ծրագիրը գործադրելու համար անհրաժեշտ է ինձ քաղաք գնալ: Ես կրկերագառնամ մինչև կէս օր, և ապա կ'ասեմ քեզ՝ ինչ պէտք է անել յաջողութիւնը ապահովեցնելու համար: Միևնույն ժամանակ ես ինքս կրծպտուեմ և խնդրում եմ, որ գաղտնի դուռը հէնց առաջին բաղխումին բացուի:» Երբ Ալագդին պալատից դուրս ելաւ, իր շորս կողմը նայեց և տեսնելով մի գիւղացու, որ գիւղն էր գնում, շտագեց նրա յետեւից հառաւ՝ և առաջարկեց հանդերձները փոխանակել, մարդն առաջարկն ընդունեց. փոխանակութիւն կատարուելուց յետոյ գիւղացին իր գործին գնաց ու Ալագդինը մտաւ մօտակայ բաղաքը: — Զանազան փողոցներ անցնելուց յետոյ նա եկաւ քաղաքի այն մասն՝ ուր վաճառականներ և արհեստաորներ ունէին իրենց շուկաներ համաձայն իրենց առևտորին: Ալագդին գնաց զեղափառաների կողմ և հարցրեց մի զեղափառաւի թէ՝ արդեօք այս ինչ

տեսակի փոշուց ունիք. դեղավաճառն Ալագդի-  
նին իր չորերից մի շատ խեղճ մարզու տեղ ըն-  
դունելով ասաց, որ անէք բայց շատ թանդ,  
որի վրայ Ալագդին դուքս բերեց քատակը և  
ցայց տալով նրան մի քանի օսկի՝ խնդրեց  
մեկ ու կէտ դքախմա փոշի, որ դեղավաճառ  
կշռեց և տուեց նրան առելով՝ պինը մեկ սա-  
կի էր Ալագդին փողը զբեց ձեւքն և շտա-  
ռից պարագար, որ խկոյն գագտնի դռնավ  
ներած մասւ. Երբ նա եկաւ Իշխանուհու օ-  
թեակն ասաց նրան, «Իշխանուհի, զու պէտք  
է գապես քո ատելութիւնը, որ սմէս դէպի  
Մոդը, և դրանց բարեկամական ձևեր ցոյց  
տաս նրան, խողբել ու պարտաւորեցնել որ քա-  
խնջուքին մասնակից լինի օթեակներիցդ մե-  
կում: — Նրա հետանալուց տաաց՝ խնդրիր  
բաժակները փոխանակել հետդ. զէպի նա-  
քուաբած մեծարանքներից հարբած՝ ուրա-  
խութեամբ կընդունի՝ երբ զու կրտաս նրան  
այս փոշին պարունակող բաժակը: Խմելիս  
անոմիջապէս քնի մէջ կ'ընկնի նա ու մենք  
ձրսպր ձեւք կըբերենք, որի ստրաւկները կը-  
կատարեն մեր հրամաններն ու կըբերազարձ-  
նեն մեղ ու մեր պարագը 2ինաստանի մայ-  
րաբազարը: Իշխանուհին բոլոր որանվ նա-  
զանդուեց իր ամուսնու նրահանգներին: Նա

մի հաճելի տեսոք ձևացրեց Մոգի միւս այցե-  
լութեան ժամանակ, և խնդրեց նրանից դալ  
մի խնջուքի, որ ամենամեծ փափաքով լարն-  
դունեց. Երբ երեկոն անցնելու վրայ էր՝ նա  
խնդրեց նրանից բաժակը փոխանակել իր  
հետ, Իշխանուհու նշանի վրայ գեղուած բա-  
ժակը բերուելով՝ Մոգին տուեց: Նա խմելց  
սրտուի Իշխանուհու մինչև վերջին կաթին  
և անկենդան շրջուեց բազմոցի վրայ: Դուքը  
բացուեց՝ Ալագդին մտաւ կահճճը: Իշխա-  
նուհին վերկենալով իր նիստից՝ ուրախացած  
վաղեց զրկատանուելու նրա հետ, բայց  
նա կանգնեցրեց և տաց. «Իշխանուհի, զար-  
ձիր քո օթեակ, ժողովն ինձ միայնակերը ես  
կ'աշխատեմ փոխադրել քեզ զէպի Զինատ-  
տան՝ այնքան արագ, որքան զու բերուել եր-  
այստեղից:» Երբ Իշխանուհին, իր տիկնոցը  
և ստրկուհիներ զահլիճ գնացին, Ալագդին  
դուռը փակեց և զնալով ուղղակի զէպի Մո-  
գի դիմուն ու բանարով նրա բաճկոնը՝ վերցրեց  
ձրագն և շվեց, Ոգին անոմիջապէս երիաց:  
«Ոգի,» տուաց Ալագդին. «Հրտանայում եմ քեզ՝  
փոխադրել այս պալատը վայրկենտղէտ այն-  
տեղ, որտեղից այստեղ բերուեց:»  
Ոգին խոնարհեցրեց իր զուին՝ Ինչան  
հետազանդութեան և աներեւութեացու:

Անմիջապէս պարագաներ վոխադրուեց 2ինաստան, և նրա տեղափոխումը զգացուեց միայն երկու փոքրիկ չափումներով, մէկը՝ երբ բարձրացրուեց, միւսը՝ երբ ցած դրաւեց, երկուսն էլ ամենակարճ ժամանակամիջոցում։ Ալարդինի պարագաները վոխադրուելու հետևեալ առաւօտ՝ երբ Սուլթան դուրս էր նայում լուսամուտից սպալով իր դստեր ճակատագիրը՝ յանկարծ տեսաւ պարագան։ Ուրախութիւնն և բերկրութիւնը յաջորդեցին տիրութեան և վշտի։ Նա հրամայեց թամբել մի ձի, հեծաւ նոյն ըուպէին՝ կարծես թէ ուսով չ'էր կարող բաւական շուտով տեղը հասնել։

Ալարդինն այդ առաւօտն երաւ արևածագին, հագաւ ամենաշքեղ հանգերձներն ու գնաց քսան և չորս լուսամտեայ դահլիճն, որտեղից նա նկատեց Սուլթանին մօտենալիս, որին լնգունեց տանդարդի ներքեւ, ուր օգնեց նրան ձիուց իջնել։ Նա առաջնորդեց Սուլթանին Իշխանուհու օթեակը։ Երջանիկ հայրը գրկախառնուեց իր որդու հետ՝ ուրախութեան արտասունքներով, Իշխանուհին և վոխադարձ նոյնն արեց։ Կարճ միջոցից յետոյ, որ նուիրեցին վոխադարձ բացատրութիւնների բոլոր պատահածների, Սուլթանն ալարդինին վերապարզեց իր շնորհ-

ներն և արտայայտեց իր վիշտն այն առերևոյթ կոպտութեան համար։ «Որդին,» ասաց նա, «մի դժկամակիր քո դէմ եղած իմ վարմութից, դրանք առաջացել են իմ հայրական սիրուց։ Ուրեմն գու պէտք է մոռանաս այն շափազանցութիւններն, որոնց ստիպուած էի դիմել։» — «Վեհափառ Տէր,» պատասխանեց Ալարդին, «Զեր վարմունքից տրտնջելու ամենափոքրիկ պատճառ չ'ունեմ, որովհետև ոչինչ չ'էր արել՝ բայց եթէ այն ինչոր ։ Զեր պարտքն էր պահանջում։ Այս անարդ մոզը՝ մարդկանցից ամենաստորն՝ եղաւ, մեր միակ դժբախտութեան պատճառը։»

Մի քանի տարուց յետոյ Սուլթանը մեռաւ բարի ծերութեամբ, և որոնետև նա արու զաւակներ չ'ունէր, Իշխանուհի Բուղիր յաջորդեց նրան, և Ալարդինի հետ միասին թագաւորեցին շատ տարիներ և թողին մի բազմանդամ ու ծաղկեալ գերպաստան։



Ելունդաս միւ մուջից յիշ բարպարսութ և մըծի  
առ զատ միջին պահու մունելուրով  
և անկախ ին նոր նիր ոգ զիմնաւորեր մի  
մօքայլու ին մէ յայնունու վանոր զիջ  
միւ ունանու և զայիր որ մուզը ու ուղին  
չէ նուրբիու յանու այդանունի այսնորութաւ  
Ա յանունութաւ **Ա Զ Դ** ուսիւնէ մի ։ զմուք  
մու ուժօւնու այսնունունու ու մէ ամերրուց  
ո մունունու այսնունունու թիզունունու  
ու մէ ամերրուց այսնունունու թիզունունու  
1. ծապոնական  
2. Հնդկական  
3. Պարսկական } Հեքետիներ :

Հետզինետէ ալս ուղղութեամբ պատրաստուած  
գեռ ուրիշ հեքետիներ էլ են թարգմանւուած։  
Հրատարակել ցանկացողները կարող են դիմել  
թարգմանչին։

«Ալադին» զնել ու գողները դիմեն Հրատա-  
րակին հետեւալ հասցեով՝ Պ. Կարապէս Ա. բեան  
Սպահան, Խոր-Զուղա.

մասնարդը յանձնու ու նորուն

1127

Monachus lib. superius in p[ro]p[ri]etate

superius in p[ro]p[ri]etate

superioris in p[ro]p[ri]etate

superioris in p[ro]p[ri]etate

superioris in p[ro]p[ri]etate in p[ro]p[ri]etate  
superioris in p[ro]p[ri]etate in p[ro]p[ri]etate  
superioris in p[ro]p[ri]etate in p[ro]p[ri]etate

superioris in p[ro]p[ri]etate in p[ro]p[ri]etate  
superioris in p[ro]p[ri]etate in p[ro]p[ri]etate

ՀԱՅՈՒԹ  
Կ 1 ՀԱՅՈՒԹ  
ՀԱՅՈՒԹ

0008984



500